ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԱՐՑԱԽ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Բանալի բառեր - Արցախ, Զանգեզուր, Հայաստանի Հանրապետություն, Խորհրդային Ռուսաստան, Խորհրդային Ադրբեջան, Դրո, Նժդեհ, Աբրամ Կիսիբեկյան, գնդապետ Մեսյան, Արսեն Միքայելյան, Մուստաֆա Քեմալ, Խ.Սուլթանով, թուրքական և խորհրդային զորքեր:

1920 թ. ապրիլին Միխայիլ Տուխաչևսկու հրամանատարությամբ գործող խորհրդային բանակը, որի ռազմական խորհրդի անդամն էր Սերգո Օրջոնիկիձեն, Հյուսիսային Կովկասում պարտության է մատնում դենիկինյան զորքերին և պատրաստվում ներխուժել Հարավային Կովկաս, այն է՝ Ադրբեջան, Հայաստան և Վրաստան: Կովկասյան անկախ հանրապետությունները նվաճելուց հետո, խորհրդային զորքերը պիտի շարունակեին իրենց հաղթարշավը դեպի հարավ, ապա կապեր հաստատեին քեմալական Թուրքիայի հետ ու համատեղ ուժերով Մերձավոր ու Միջին Արևելքից դուրս մղեին «Միջազգային իմպերիալիզմ»-ը ներկայացնող տերություններին: Խորհրդային զորքերը եթե շարունակեին իրենց հաղթարշավն ու հաստատվեին Անդրկովկասում, ապա դա նշանակում էր, որ վիճելի տարածքներ հարցում դաշնակից տերություններն այլևս որևէ իրավասություն չէին կարող ունենալ: Այդպիսի իրավիճակում Ադրբեջանը մեկընդմիշտ կորցնելու էր Սյունիքն ու Արցախը, քանի որ 1-ին աշխարհամարտում պարտված Թուրքիան իր զորքերը դուրս էր բերել Կովկասի գրավյալ տարածքներից, իսկ այժմ արդեն հայտնվում են քաղաքացիական կռիվներում հաղթանակած խորհրդային զորքերը, որոնք Կովկասից դուրս են մղում Դենիկինի գլխավորած բանակը, որը գործում էր Անտանտի տերությունների և, հատկապես, Անգլիայի ռազմական ու ֆինանսական աջակցությամբ:

1920 թ. ապրիլի 27-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչները համատեղ դիմում-ուղերձ են ներկայացնում Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչին, որով առաջարկում են, որ «…Հայաստանի կառավարությունը անհապաղ երաշխիք տա, որպեսզի ադրբեջանական կառավարությունը հնարավորություն ունենա Ղարաբաղում գտնվող իր զորքերը տեղափոխի պաշտպանելու վտանգված սահմանը…[1]:

[1] **Алла Тер-Саркисян**, Армяне Нагорного Карбаха, Москва, 2015, ст. 264.

Եթե Հայաստանը հարգեր Անտանտի տերությունների կողմից իրեն ներկայացրած պահանջ և երաշխիք տար, որ ադրբեջանական զորքերն Արցախից անարգել տեղափոխվեին վտանգված սահմանը, այնտեղ դիմակայելու խորհրդային զորքերին, ապա այդ պարագայում Արցախի խնդիրը կարելի էր համարել մեկընդմիշտ լուծված:

1920 թ. ապրիլի 26-ին Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի նախագահ Մուստաֆա Քեմալը հատուկ ուղերձով դիմում է Խորհրդային Ռուսաստանին ու հենց նախաբանում առաջարկում «Հայաստանի դեմ համատեղ գործողության մասին»:

Խորհրդային Ռուսաստանին ներկայացրած ուղերձում Մուստաֆա Քեմալը փաստորեն առաջարկում է, որ եթե խորհրդային ուժերը նախատեսեն ռազմական գործողություն ընդդեմ Վրաստանի կամ դիվանագիտական ուղիով ստիպեն նրան, որ խորհրդայնանա և միջոցներ ձեռնարկի Կովկասից վտարելու անգլիացիներին, ապա Թուրքիայի կառավարությունն իր վրա կվերցնի իմպերիալիստական Հայաստանի վրա հարձակվելու պարտավորությունը, ինչպես նաև ստիպելը Ադրբեջանին, որ մտնի խորհրդային պետությունների շարքը:

Քեմալը խնդրում է, որ Խորհրդային Ռուսաստանը իրեն տրամադրի «հինգ միլիոն թուրքական լիրա՝ ոսկով, զենք ու զինամթերք…ռազմատեխնիկական միջոցներ, սանիտարական նյութեր և զինվորների համար սննդամթերք…[1]:

Ապրիլի 28-ին կարմիր զրահազնացքը առանց որևէ արգելքի մուտք է գործում Բաքու և մուսավաթական Ադրբեջանի Հանրապետությունը հռչակում է Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական հանրապետություն:

Համաձայն Ա. Լալայանի պնդման՝ 32-րդ դիվիզիան մուտք է գործում Գանձակ, իսկ մայիսի 10-ին տեղափոխվում է Արցախ և շտաբը հաստատելով Շուշիում՝ հրամանատարությունը սերտ կապեր է հաստատում Արցախի կոմունիստական կազմակերպության ղեկավարության հետ[2]:

«Դիվիզիայի զինկոմ Կարլ Ռատնեկը, - գրում է Ա. Լալայանը, - Լեռնային Ղարաբաղի մարզկոմի քարտուղար Սարգիս(Սաքո) Համբարձումյանի և Մի շարք կուսակցական ղեկավար աշխատողների հետ հանդիպումների ժամանակ ծանոթանում է Ղարաբաղի քաղաքական դրության հետ, Շուշի քաղաքում մուսավաթականների և դաշնակցականների կատարած արյունահեղությունների մանրամասներին, խմբապետ Դրոյի և Նժդեհի ռազմական պլանին և որոշ տեղեկություններ ստանում Զանգեզուրում տիրող դրության մասին»[3]:

---

[1] Նույն տեղում:

[2] **Լալայան Ա.**, Զանգեզուրյան դրվագներ 1917-1921 նթթ., Երևան 1985, էջ 38:

[3] Նույն տեղում:

Ուշագրավ է, որ կոմունիստ պատմաբանը քաջ գիտենալով, որ Շուշիի ողբերգության հեղինակը մուսավաթի առաջնորդած թուրք ջարդարարներն էին, այնուամենայնիվ, հավատարիմ գտնվելով իր դավանած գաղափարախոսությանը, խորհրդային զորամասի հրամանատարին ներկայացնում է Շուշի քաղաքում մուսավաթականների և դաշնակցականների կատարած արյունահեղությունների մանրամասները:

Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի շահերը փոխադարձաբար համընկնում ու ներդաշնակում էին: Նորաթուխ դաշնակիցների համար «Միջազգային իմպերիալիզմի» դաշնակից Հայաստանի Հանրապետությունը դիտվում էր որպես թշնամի, իրենց նպատակների կենսագործման ճանապարհին կանգնած խոչընդոտող ուժ:

ՀՀ կառավարությունը տեղյակ էր Հյուսիսային Կովկասից դեպի Արցախ, Զանգեզուր և Նախիջևան առաջացող Կարմիր Բանակի զորամասերի, ինչպես նաև Ադրբեջանի նկատմամբ բոլշևիկների դրսևորած «բարիդրացիական» մոտեցումների մասին: Հիմք ունենալով Հարավային Կովկասում հայտնված Կարմիր Բանակի զորամասերի ներկայությունն ու Ադրբեջանի խորհրդայնացման իրողությունը, ՀՀ կառավարությունն Արցախի ու Զանգեզուրի հարցում անհրաժեշտաբար պիտի առաջնորդվեր ստեղծված կացությանը համահունչ մարտավարությամբ: Չպետք է մոռանալ, որ ՀՀ կառավարությանն ավելի քան հայտնի էին Արցախի և Զանգեզուրի նկատմամբ Ադրբեջանի զավթողական նկրտումները, որոնք ցայտուն կերպով դրսևորվել էին նախորդ տարիներին: Միթե՞ Արցախի և Զանգեզուրի նկատմամբ Ադրբեջանը կարող էր փոխել իր դիրքորոշումն ու վերաբերմունքը:

Հայաստանի վարչապետին հասցեագրած զեկուցագրում Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչը հաղորդում է. «Ժամանակավոր ժողկոմի նախագահ Սուլթանովը ուղիղ կապով Հեյդար Բամմատովին հայտնում է, որ կարմիր զորամասերը արդեն գրավել են Եվլախը և նպատակ ունենալով միանալ անատոլիական բանակին՝ առաջանում են Շուշիի մայրուղու ուղղությամբ: Նա հայտնում է, որ Վրաստանը իրենց համար սարսափելի չէ, բայց եթե դաշնակցական կառավարությունը կփորձի դիմադրել, ապա իրենք հարկադրված կլինեն կռվել[1]:

Հայաստանի Հանրապետության վարչապետին տեղեկացնելով, թուրքական զորքերին միանալու նպատակով դեպի Արցախ-Զանգեզուր--Նախիջևան Կարմիր բանակի կատարած տեղաշարժերի մասին, դիվանագիտական ներկայացուցիչը միաժամանակ հայտնում է. «Ես անհնարին չեմ համարում այդ տեղաշարժերը(նկատի ունի թուրքական զորքերի

[1] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 202:

միանալուն նպատակաուղղված Կարմիր Բանակի տեղաշարժերը - Հ.Գ.) ոչ թե Վրաստանի, այլ Արցախ-Զանգեզուր-Նախիջևան ուղղությամբ[1]:

1920 թ. ապրիլի 30-ին Ադրբեջանի հեղկոմը, ի դեմս Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության արտաքին գործերի կոմիսարի տեղակալ Միրզա Հուսեինովի, Հայաստանի կառավարությանն է ներկայացնում հետևյալ վերջնագիր-նոտան.

«Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության բանվոր-գյուղացիության կառավարությունը, ի դեմս Հեղափոխական կոմիտեի, պահանջում է. 1. Ձեր զորքերից մաքրել Զանգեզուրն ու Արցախը: 2. Հետ գնացեք ձեր սահմանները: 3. Դադարեցրեք ազգամիջյան կոտորածները»[2]:

Ադրբեջանի հեղկոմը իր վերջնագրի պատասխանը ստանալու համար Հայաստանի Հանրապետությանը տալիս է ընդամենը երեք օր ժամանակ և որպես զգուշացում՝ պահանջը չկատարելու պարագայում, սպառնում պատերազմով[3]:

Նույն օրը՝ ապրիլի 30-ին, Հայաստանի Հանրապետությանը Ադրբեջանի հեղափոխական կոմիտեի կողմից ներկայացրած վերջնագրին հետևում է Ադրբեջանի բոլոր գավառների ղեկավարներին ուղղված, բոլշևիկների կողմից Արցախի գեներալ-նահանգապետ ճանաչված Խոսրով Բեկ-Սուլթանովի հաղորդագրությունը, որով նա հայտնելով Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատման ու Թուրքիայի հետ արդեն կայացած դաշինքի իրողությունը՝ միաժամանակ առաջարկում է, որպեսզի բնակչությունը ցնծությամբ, խանդավառությամբ ու տոնախմբությամբ նշի նոր կարգերի հաստատումը և ամենուրեք կազմակերպի խաղաղ հանրահավաքներ ու տոնական շքերթներ[4]:

Հաջորդ օրն ևեթ՝ մայիսի 1-ին, զինվորական գործողություններն անհապաղ դադարեցնելու պահանջով, Ս. Օրջոնոկիձեի, Կիրովի ու Լևանդովսկու ստորագրությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերջնագրի տեսքով հեռագիր են հղում Կովկասյան ճակատի ռազմական խորհուրդն ու 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը:

Հեռագրում մասնավորապես նշվում էր՝ « Խորհրդային Ֆեդերատիվ Ռուսաստանի անունից հայկական կառավարությանը առաջարկում ենք դադարեցնել Խորհրդային Ադրբեջանում տեղի ունեցող բոլոր կարգի ռազմական գործողությունները և զորքերը դուրս բերել նրա սահմաններից»[5]:

---

[1] Նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ.38, թ. 84:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 499, թ. 1:
[5] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 274:

Համաձայն այդ հեռագրի, հայկական զորքերը Ադրբեջանի տարածքից, իսկ Արցախը նրանց հաշվարկմամբ դիտվում է Ադրբեջանի տարածք, պետք է դուրս գային 24 ժամվա ընթացքում, հակառակ պարագայում, ըստ հեռագրի հեղինակների գնահատմամբ՝ այդ փաստը կդիտվեր Հայաստանի կառավարության կողմից որպես մարտահրավեր Խորհրդային Ֆեդերատիվ Ռուսաստանին: Միաժամանակ, Կովկասյան ճակատի ռազմական խորհուրդն ու 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության ներկայացուցիչները անթաքույց սպառնում են, որ եթե հայկական կողմը մերժի ընդունել վերոհիշյալ առաջարկությունը, ապա այդ պարագայում, իրենք իրենց ներկայացրած պահանջները կիրականացնեն Կարմիր բանակի ուժերով, որի պատասխանատվությունն ամբողջովին կընկնի Հայաստանի կառավարության վրա[1]:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտնվում է աննախանձելի, կարելի է ասել, քառսային իրավիճակում:

ՀՀ կառավարության համար անտարակույս չպետք է գաղտնիք լինել, որ Մուստաֆա Քեմալի գլխավորած ազգայնական շարժումը, տիրապետելով զգալի քանակությամբ մարտական ուժերի, իր հարձակման գլխավոր թիրախը վաղ թե ուշ պիտի դարձներ նաև Հայաստանի Հանրապետությունը:

ՀՀ կառավարության ու զինվորական նախարարության համար ամենևին և ոչ մի պարագայում անակնկալ չպետք է լիներ Հայաստանի Հանրապետության վրա հյուսիսից ու հարավից, այսինքն՝ քեմալական Թուրքիայի ու Խորհրդային Ռուսաստանի համաձայնեցված, միաժամանակ ձեռնարկվող հարձակման սպառնալիքը, որ տեղի է ունենում նույն տարվա սեպտեմբեր ամսին:

Փոքր-ինչ առաջ ընկնելով նկատենք, որ ավելի քան 40.000 թվակազմ ունեցող սպա ու զինվոր ունեցող ՀՀ բանակը, պիտի կազմ ու պատրաստ լիներ դիմակայելու իր մարտական ուժերին բոլոր առումներով զգալիորեն զիջող հակառակորդի հարձակումը և պատերազմի գլխավոր ուղղությունում՝ Կարս-Սարիղամիշ ռազմաճակատում, չկրեր խայտառակ, դույզն-ինչ որևէ լուրջ հանգամանքով չպատճառաբանված սարսափելի պարտություն, որի հետևանքով Հայաստանն ու հայությունը հայտնվել են կործանման եզրին:

Ինչպիսի՞ ռազմավարությամբ պիտի առաջնորդվեր համանման մարտահրավերների հանգույցում հայտնված Հայաստանի Հանրապետությունը, մանավանդ երբ ստանում է Խորհրդային ուժերի կողմից ներկայացրած վերոհիշյալ սպառնալի վերջնագրերը:

[1] Տե՛ս նույն տեղում:

ՀՀ կառավարությունը իր առջև ծառացած գերխնդիրներից առաջին անտարակույս Խորհրդային Ռուսաստանի ներկայացրած պատերազմի սպառնալիքներ պարունակող վերջնագրերն էին: Խորհրդային Ռուսաստանի հետ բռնկվով պատերազմի վտանգը կանխելու համար, ՀՀ կառավարությունը, նախ և առաջ պիտի փորձեր քայլեր ձեռնարկել քաղաքական դաշտում, դիվանագիտական ճանապարհով:Դժվար չէր հասկանալ, որ Հայաստանի Հանրապետությունը ի զորու չէր միաժամանակ պատերազմել երկու ճակատով.

1-ին՝ արտաքին ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի զորքերի և նրա դաշնակից, իրեն խորհրդային հռչակած Ադրբեջանի բանակի: Ավելորդ չէ նշել, որ Հայաստանի վրա ծառացած էր նաև հարավից՝ քեմալական ուժերի հարձակման սպառնալիքը, որի մասին, անկասկած, տեղյակ էին ՀՀ ղեկավար շրջանները:

2-րդ՝ ներքին, լուծել հանրապետության տարածքը մշտապես ապստամբական վիճակում գտնվող մահմեդական բնակչությունից վերջնականապես մաքրելու խնդիրը, որի համար պահանջվում էր ոչ միայն զորքերի մասնակցություն, այլև նյութական հսկայական միջոցներ:

Ի պատասխան Կովկասյան ճակատի ռազմական խորհրդի և 11-րդ բանակի հրամանատարության ապրիլի 30-ին ու մայիսի 1-ին ներկայացրած վերջնագրերի՝ ՀՀ արտաքին գործերի նախարարը պատասխանում է. «...հայտնում ենք, որ Ադրբեջանի որևէ տարածքում հայկական զորքեր երբեք չեն եղել: Ընդհակառակը, Ադրբեջանի բեգական մուսաֆաթիստական զորքերն են գտնվում հայկական Ղարաբաղի տարածքում ու վերջերս նրանք կոտորել են հայ ժողովրդին և այրել նրանց գյուղերն ու քաղաքները: Ղարաբաղի բնակչությունը, գյուղացիական պատգամավորների համագումարներում բազմիցս արտահայտել է Ադրբեջանի կազմում չմտնելու իր անհողդողդ կամքը»[1]:

Հայկական կողմը իր հերթին պահանջում է, որպեսզի Ադրբեջանի նորընտիր կառավարությունը իր զորքերը դուրս բերի Ղարաբաղից և նախաձեռնի, արդեն 9-րդ անգամ, բնակչության շրջանում հարցում և, ըստ այդմ, գործեն համաձայն Ղարաբաղի բնակչության ցանկության ու կամքի:

Հավանություն արժանացնելով վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու ռուսական իշխանությունների տարածած հայտարարությանը և հույս հայտնելով, որ այն գոհունակությամբ կընդունվի Արցախի աշխատավոր գյուղացիության կողմից՝ ՀՀ արտաքին գործերի նախարարը ՀՀ կառավարության անունից Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչներին առաջարկում է իրական կացությունը տեղում ուսումնասիրելու համար չեզոք հանձնախումբ ուղարկել Ղարաբաղ ու հավե-

[1] ՀԱԱ, ֆ. 278, ց.1, գ. 38, թ. 90:

լում. «...մեր կառավարությունը գտնում է, որ այս հարցում որևէ հիմք չկա ներկայացնելու վերջնագիր-նոտա ու վստահաբար հայտնում, որ Խորհրդային Ռուսաստանի բանվոր-գյուղացիական կառավարությունը համաձայն Լենինի դեկրետի ու Համառուսաստանյան 4-րդ համագումարի, վաղուց է ճանաչել Հայաստանի անկախությունն ու ինքնուրույնությունը և թույլ չի տա տարիներ շարունակ արյուն հեղող հայ աշխատավոր ժողովրդի նոր ճնշումները[1]:

1920 թ. մայիսի 15-ին թվագրած հեռագրում, ՀՀ արտաքին գործերի մինիստրը պատասխան է ուղարկում նաև Ադրբեջանի ժողովրդական կոմիսարի տեղապահ Հուսեինովին, իսկ պատճեն՝ Մոսկվա, Լենինին ու Չիչերինին:

Կապի բացակայության պատճառով Հայաստանի կառավարությունը առաջին օրերին չի կարողացել Արցախի ժամանակավոր կառավարությանն ու Զանգեզուր-Արցախ զորախմբի հրամանատարությանը տեղեկացնել Խորհրդային Ադրբեջանի կողմից իրեն ներկայացված վերջնագրի մասին: Այսուհանդերձ, Ադրբեջանի հեղկոմի կողմից Հայաստանի կառավարությանը ներկայացված վերջնագիրը Դրոյի և արցախահայության համար, այնուամենայնիվ, չէր կարող գաղտնիք լինել:Տարբեր աղբյուրներից նրանց հայտնի է դառնում մուսաֆաթական Ադրբեջանում խորհրդային կարգերի հռչակման իրողությունը:

Այդ նույն օրերին Դրոյի և Զանգեզուր-Արցախ զորախմբի շտաբի պետ Միրիմանյանի ստորագրությամբ Ադրբեջանում տեղի ունեցած արմատական փոփոխությունների մասին Գարեգին Նժդեհին ուղարկում են մի գրություն, որը, կարելի է ասել, ինչ-որ իմաստով մատնանշում է նրանց ապագա ձեռնարկումների ուղղվածությունն ու մարտավարությունը:

«Հարավային Արցախյան ջոկատի պետ, փոխգնդապետ Նժդեհին.

Ադրբեջանում բոլշևիզմի և Բաքուն գրավելու մասին լուրերը հաստատվում են...Շուշիից եկած հայուհին և թաթարները հաղորդում են, որ սպաները հանել են իրենց ուսադիրները, նետել զենքերը, Սուլթանովը կապել է կարմիր ժապավեն և այլն: Թեև բոլշևիզմը ակնհայտ է, բայց առայժմ, ինչպես տեսնում եք, թաթարներին առաջնորդում են Սուլթանովը, Նուրի փաշան և այլոք: Ուստի մենք պետք է խիստ զգույշ լինենք: Գտնում եմ, որ ինչպես միշտ, Ադրբեջանում առաջին շրջանն անցնում է անցավագին, բայց, հավանաբար, շուտով կսկսվի բանակի քայքայումը:

Մեզ անհրաժեշտ է այժմ հակառակորդին հնարավորություն տալ ինչպես հարկն է կազմալուծվելու և ձեռնպահ մնալ ամեն մի ելույթից,

[1] Նույն տեղում:

քանզի դա կարող է նրանց ստիպել ինքնակազմակերպվելու: Մինչև բոլշևիզմի բնույթի պարզելը պետք է սպասողական դիրք գրավենք:

Սպասում ենք տեղեկությունների Երևանից և Ջիվանշիրից:

Մի՛ ձեռնարկեք հարձակողական գործողություններ և կազմակերպեցե՛ք Ձեզ վստահված շրջանի համար պաշտպանությունը...[1]:

Թեպետ Գարեգին Նժդեհին հասցեագրած գրությունում Դրոն և Միրիմանյանը նրան հրահանգում են չձեռնարկել հարձակողական գործողություններ, բայց, քանի որ Ադրբեջանում տեղի ունեցած արմատական փոփոխություններն արդեն իրողություն էին, ուստի անհրաժեշտ էր քննարկել ստեղծված կացությունը և որդեգրել տիրող կացությանը համահունչ մարտավարություն:

Ի պատասխան Ադրբեջանի հեղկոմի վերջնագրի՝ Արցախի ժամանակավոր կառավարությունը 1920 թ. մայիսի 14-ին Դիզակի (ներկայիս Հադրութի շրջան) Տող գյուղում ՀՀ կառավարության և ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Արսեն Միքայելյանի նախաձեռնությամբ գումարում է Դիզակի շրջանի բոլոր գյուղերի ներկայացուցիչների համագումար, ուր որոշել են «ադրբեջանական վերջնագիրը համարել ընդամենը նոր պատրվակ հայերին նոր դժբախտություններ պատճառելու և Արարատյան կառավարությունը ընդունել որպես հարազատի ու Զանգեզուրի հետ միասին մտնել Արարատյան Հանրապետության կազմում..»[2]:

Խորհրդային Ռուսաստանին «խորհրդայնացման նպատակով» անհրաժեշտ էին անմիջական հաղորդակցության ուղիներ, կապեր ստեղծել Արևելքի երկրների և, մասնավորապես իր նոր դաշնակցի՝ քեմալական Թուրքիայի հետ: Կովկասյան անկախ հանրապետությունները անջրպետում էին Ռուսաստանից Թուրքիային, իսկ նրանց քաղաքական շահերը պահանջում էին վերացնել այդ անջրպետները: Ադրբեջանի հարցը լուծվեց խորհրդայնացման ճանապարհով: Սակայն Հայաստանի Հանրապետությունը և հատկապես Արցախը, Զանգեզուրն ու Նախիջևանը, սեպաձև խրվելով արդեն Խորհրդային Ադրբեջանի և Թուրքիայի միջև, փաստորեն գլխավոր խոչընդոտներ էին «համաշխարհային հեղափոխության» իրականացման ճանապարհին: Անհրաժեշտ էր վերացնել այդ սեպը և անմիջական կապ ստեղծելով Խորհրդային Ադրբեջանի և Թուրքիայի միջև՝ ճանապարհ բացել դեպի Արևելք:

Դեպի արևելք տանող մայրուղու առաջին արգելապատնեշն Արցախն էր, ապա՝ Զանգեզուրը: Արցախահայության դիմադրությունն առավել դյուրությամբ հաղթահարելու համար բոլշևիկյան «ազատարարները» հմտորեն կիրառում էին իրենց հարազատ և բազմիցս փորձարկած մե-

[1] **Միմոնյան Ա.,** Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 մթթ, Երևան, 2000, էջ 57:
[2] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 90-91:

թողները, այն է՝ կեղծ և շռայլ խոստումների քարոզչությամբ ապակողմնորոշել ու սիրաշահել ժողովրդին և տեղերում հաստատել խորհրդային իշխանության կառույցներ՝ հեղկոմներ:

Որոշակիորեն տեղյակ լինելով Զանգեզուրի և Արցախի նկատմամբ Խոսրով Բեկ-Սուլթանովի գործած չարագործություններին ու զավթողական տրամադրվածությանը՝ Ադրբեջանի նորանշանակ բոլշևիկյան իշխանությունը՝ հեղկոմը, ապրիլի 29-ի որոշմամբ նրան է վստահում Արցախի հեղկոմի ղեկը: Առաջնորդվելով խորհրդային իշխանությունների կենսագործած քաղաքականությամբ՝ Խոսրով Բեկ-Սուլթանովը նրանց գործուն աջակցությամբ սկսում է հեղկոմներ հիմնել նաև Արցախի շրջաններում[1]:

Չբավարարվելով այդ ամենով՝ Սուլթանովը Շուշիի փրկված հայերի միջոցով հայտնում է Արցախի ղեկավարությանը, որ «Կարմիր Բանակը գրավել է Բաքուն և Շուշիում կազմված է Հեղափոխական կոմիտե (Ռևկոմ)՝ իր նախագահությամբ, և առաջարկում է դադարեցնել հարձակողական գործողությունները[2]:

Խ. Սուլթանովը թեպետ փորձում է կիրառել զանգվածներին մոլորեցնելու և սիրաշահելու բոլշևիկների, իհարկե նրանց իսկ թելադրությամբ, գործադրած մարտավարության ձևերն ու միջոցներն, սակայն նրա ջանքերն ապարդյուն էին: Արցախահայությունը, քաջատեղյակ լինելով նորաթուխ բոլշևիկի հակահայ գործունեությանն ու տրամադրվածությանը, բնականաբար չէր կարող հավատ ընծայել նրա քարոզչությանն ու խոստումներին:

Վարիչների խորհուրդն ու Արցախի գյուղացիության պաշտպանության կոմիտեն Դրոյի մասնակցությամբ քննում են Խ. Սուլթանովը գրությունները և որոշում պատասխանել Խ. Սուլթանովին ու նրա միջոցով հեռագիր ուղարկել Լենինին՝ հայտնելով.

«Ա) Որ Ղարաբաղի հայ աշխատաւոր ժողովուրդը երկար տարիներու ընթացքին պայքարած է ռուս ցարական կառավարութեան եւ Ադրբէջանական խան-բէգական իշխանութեան դէմ:

Բ) Որ Ղարաբաղի ժողովուրդը բարեկամական զգացմունք ունի հանդէպ Ռուսաստանի մեծ զանգուածի, բայց չի հաւատում մի յեղափոխութեան, որ արյունռուշտ Սուլթանովների միջոցով եւ ղեկավարութեամբ է առաջ տանում:

Ե) Որ Ղարաբաղի հայ ժողովրդի կամքն է միանալ Հայաստանի Հանրապետութեան»:

Այդ նույն հեռագրում իր հավանությունն արտահայտելով խաղաղություն հաստատելու հեղկոմի կոչի նկատմամբ՝ արցախահայության ա-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 57:

[2] **Կիսիբեկյան Ա.,** Հուշեր, հ. 1, էջ 507:

նունից հանդես եկող Արցախի գյուղացիության պաշտպանության կոմիտեն հայտնում է. «Արցախի 360 հազար հայ գյուղացիությունը երեք տարի շարունակ պայքարել է թուրքական ռեակցիայի և խան-բեկական Ադրբեջանի Հանրապետության դեմ: Կրկնապատկված եռանդով նա կշարունակի պայքարը ռեակցիայի դեմ, քանի դեռ Խորհրդային Ռուսաստանի հեղափոխության հավատարիմ զավակները չեն մտել Լեռնային Արցախի սահմաններ»:

Այդ հեռագրում արցախահայության արտահայտած Խորհրդային Ռուսաստանի հեղափոխության հավատարիմ զավակներին Արցախում տեսնելու ցանկությունը շատ շուտով իրականանում է:

Մայիսի 1-ին, այսինքն՝ նույն օրը, երբ Ադրբեջանի տարածքում գտնվող 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը Օրջոնիկիձեի, Կիրովի և Լևանդովսկու ստորագրությամբ՝ խորհրդային իշխանության անունից, պատերազմ հայտարարելու սպառնալիքով վերջնագիր է ներկայացնում Հայաստանի կառավարությանը, զուգահեռաբար կարմիր բանակի զորագնդերը ներխուժում են Արցախ ու պահանջում Դրոյից հայ զինական ուժերը դուրս բերել Արցախի տարածքից: Եթե չընդունվեին Կարմիր բանակի պահանջները, ապա հանրապետությունը ստիպված կլիներ պատերազմել ոչ միայն «խորհրդային մուսաֆաթի», այլև հենց Խորհրդային Ռուսաստանի դեմ:

Մայիսի 5-ին Դրոյի հետ բանակցելու համար Արցախ են ժամանում Ս. Օրջոնիկիձեի ներկայացուցիչներ Սահակ Տեր-Գաբրիելյանն ու Լևանդովսկին և խորհրդային իշխանության անունից պահանջում հայկական զորքերը դուրս բերել Արցախի տարածքից և անցնել Զանգեզուր:

«Դրօն, - գրում է Արսեն Միքայելյանը,-պատասխանում է, որ ինքը զինուորական է, ներս է մտել Արցախ իր կառավարութեան հրահանգով և այն ժամանակ միայն, երբ Ադրբեջանը սկսել է կոտորել Շուշի քաղաքի անզէն բնակչութիւնը և աւերել հայկական գիւղերը, կը հեռանայ միայն այն ատեն, երբ համապատասխան հրաման ստանայ Հայաստանի Հանրապետութիւնից»[1]:

Խորհրդային իշխանության ներկայացուցիչները Դրոյին համոզելու նպատակով դիմում են կեղծիքի ու խաբեության.

«Բայց Հայաստանի նախկին կառավարութիւնն այլևս գոյութիւն չունի, և մայիսի 2-ին Հայաստանի մէջ հաստատուած է Խորհրդային իշխանութիւն (Հայաստանի կառավարության հետ կապի բացակայության պատճառով Դրոն դեռևս տեղեկություն չուներ հանրապետությունում բոլշևիկների սանձազերծած մայիսյան խռովությունների մասին - Հ. Գ.), - յայտարարում են նրանք:

[1] Հայրենիք ամսագիր, 1923, հոկտեմբեր, էջ 125:

- Ես զինուորական եմ, ես կը սպասեմ իմ կառաւարութեան հրահանգին, այդ կըլլայ հին թէ նոր,- լինում է Դրոյի պատասխանը:

Այն ժամանակ Օրջոնիկիձէի ներկայացուցիչներն առաջարկում են Վարիչների խորհրդի իշխանութիւնը տարածել միայն Վարանդայի և Դիզակի վրայ:

Դրօն միևնոյն պատասխանն է տալիս»[1]:

Խորհրդային Ռուսաստանի զորքերը առանց Արցախի օրինական իշխանության՝ Վարիչների խորհրդի» և Դրոյի համաձայնության, արդեն մինչև մայիսի 20-ը հայ բոլշևիկների առաջնորդությամբ մուտք են գործում Արցախի մի շարք շրջաններ և ամենուրեք հաստատում խորհրդային կարգեր: Արցախը գրավելու ամենահարմար և «անարյուն, մարդասիրական» միջոցը տեղի բնակչությանը շլացուցիչ խոստումներով ու կեղծ գաղափարներով խաբելն էր: Իսկ խաղաղություն, հավասարություն, եղբայրություն գրավիչ կարգախոսներով առաջնորդվող բոլշևիկներին դժվար չէր մոլորեցնել ադրբեջանական զորքերի մշտական սպառնալիքի տակ ապրող և իրենց բազմամյա պայքարով դեռևս բաղձալի նպատակին չհասած արցախցիներին:

Աստիճանաբար տարածվելով Արցախի տարածքում, բոլշևիկները տեղերում ստեղծում են հեղափոխական կոմիտեներ (հեղկոմ) և նրանց միջոցով ակտիվ քարոզչական գործունեություն ծավալում գյուղացիության շրջանում: Մայիսի սկզբներին Շուշիում հիմնված հեղափոխական կոմիտեն տարածում է հետևյալ գրությունը. «... Գրութիւնն ուղղուած էր Լեռնային Արցախի հայ գիւղացիութեան...

Յայտնելով, որ Բագուն, Գանձակը և Շուշին գրաւուած են բոլշևիկների կողմից, որ ամբողջ Ադրբեջանում բոլշևիկեան իշխանութիւն է և մուսաֆաթականները տապալուած են, Շուշւայ յեղկոմը կոչ է ուղղում հայ գիւղացիութեան՝ տապալելու հայկական մուսաֆաթ՝ «դաշնակների» իշխանութիւնը և միանալու իրենց, եղբայրական ձեռք մեկնելու իրենց»[2]:

Խորհրդային կոմիսարները ճիշտ էին հասկացել ժամանակի նրբությունը: Արցախի նվաճման լավագույն երաշխիքը բնակչությանը հմայելու ու մոլորեցնելու միջոցով նրա բոլշևիկացումն էր ու խորհրդայնացումը: Բոլշևիկյան ժանտախտը արագորեն տարածվում է Արցախի բնակչության շրջանում: Հայ բոլշևիկների ջանքերով Արցախի բազմաթիվ գյուղեր հոժարակամ ընդունում են խորհրդային իշխանությունը:

Ստեղծված իրավիճակում Դրոն այլընտրանք չուներ. կամ պետք է զենքի ուժով հարկադրեր Կարմիր բանակին թողնել Արցախի տարածքը, որը միանշանակորեն նշանակում էր պատերազմական գործողություն-

[1] Նույն տեղում:

[2] ՀՀ ԲԿԱ, ֆ. Ս. Վ., տուփ 2, Տեր Յակոբեանի յուշերը, էջ 1:

ներ սկսել Խորհրդային Ռուսաստանի դեմ կամ չխոչընդոտել Կարմիր բանակին Արցախի խորհրդայնացման գործում, որն էլ հավասարազոր էր համակերպվել Արցախը առայժմ Խորհրդային Ադրբեջանի կազմում թողնելու իրողությանը:

Արցախի գործիչներից ոմանք հակված էին հարցը զենքի ուժով լուծելու տեսակետին և այդ պատճառով, երբ Դրոն, այնուամենայնիվ, որոշում է, առանց մարտական գործողություններ վերսկսելու, խաղաղ ճանապարհով իշխանությունը Արցախում հանձնել հայ բոլշևիկներին: Արցախի այն գործիչները, որոնք համաձայն չէին իշխանությունը բոլշևիկներ խաղաղ ճանապարհով հանձնելու իրողությանը, մասնավորապես, Դիզակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարներից Հովակ Ստեփանյանը «Հ.Յ.Դ. դատական գերագոյն ատեանին» ուղղված իրենց զեկուցագրերում, նկարագրելով Արցախում տեղի ունեցած վերջին իրադարձությունների մանրամասները, գտնում են, որ անհրաժեշտ էր մնալ Արցախում և բոլոր հնարավոր միջոցներով պայքարել ու թույլ չտալ, որպեսզի բոլշևիկները կարողանային խորհրդայնացնելու ճանապարհով Արցախը մտցնել Ադրբեջանի կազմում[1]:

Իրոք, դժվար էր երկարատև ու արյունալի պայքարից ու կռիվներից հետո հաշտվել Արցախը դարձյալ Հայաստանի Հանրապետության կազմում չտեսնելու իրողությանը: Արցախյան հարցի լուծման նման վերջաբանը անառարկելիորեն ծանր է եղել նաև Դրոյի համար: Այդպիսի իրավիճակը աննախադեպ էր նրա մարտական հարուստ կենսագրությունում: Նա գլխավորապես ռազմի մարդ էր և Արցախի համար գուցե և ճակատագրական նշանակություն ունեցող վճիռ կայացնելու համար, տվյալ պարագայում նրանից պահանջվում էր խորագետ քաղաքագետի նրբին միտք, հավասարակշռված կողմնորոշում ու սթափ մոտեցում: Անբասիր ռազմագետի ու քաջ զինվորի անուն վաստակած Դրոյին, այս դեպքում, պետք է փոխարիներ քաղաքագետ Դրոն, որին վիճակված էր լուծելու չափազանց դժվարին ու պատասխանատու խնդիր:

Դատելով Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքական կյանքում տեղի ունեցող դեպքերի ընթացքից՝ աներկբա կարելի է պնդել, որ Հայաստանի կառավարության համար նման ճակատագրական որոշում կայացնելու համար ժամանակը և հնարավորությունները չափազանց աննպաստ էին և գրեթե անհնարին: Իսկ Արցախում հայտնված քաղաքացիական պատերազմում հաղթանակած խորհրդային զորքեր դեմ պատերազմելը, որը հավասարազոր է Խորհրդային Ռուսաստանին պատերազմ հայտարարելուն, պատմական այդ ժամանակաշրջա-

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 1, 3, 6:

նում բնավ չէր կարող տեղ գտնել Հայաստանի կառավարության քաղաքական ու առավել ևս ռազմական ծրագրերում:

Հանրապետության կառավարության հետ կապի բացակայությունն ավելի է ծանրացնում առանց այդ էլ անորոշ ու անելանելի իրավիճակը: Մայիսի 24-ին Արցախում տիրող կացության վերլուծության և հետագա անելիքները ճշտելու նպատակով Դրոն Չանախչի գյուղում հրավիրում է խորհրդակցություն:

Պատմում է խորհրդակցության մասնակից վերոհիշյալ Ա . Միքայելյանը. «Չանախչի գիւղի մէջ տեղի է ունենում Հայաստանից եկած պաշտօնեաներու՝ Դրօյի, Նժդեհի, զնդապետ Միրիմանեանի և Ա. Միքայելեանի (այս տողերի հեղինակը - Հ.Գ.) խորհրդակցութիւնը, որի մէջ պարզւում է.

Ա) Որ Արցախի ժողովրդի տրամադրութիւնները զգալապէս փոփոխութեան ենթարկուած և աստիճանաբար կարող են վերածուել թշնամութեան.

Բ) Որ մայիսի 12-ից սկսեալ Հայաստանի կառավարութենէն հակառակ բազմիցս եղած դիմումների, ոչ մի տեղեկութիւն չի ստացուել, ապա ուրեմն Հայաստանի Հանրապետութիւնը գտնուում է օրհասական վտանգի մէջ:

Գ) Որ Նժդեհի Ղափանի զօրամասը չի կարող երկար մնալ Արցախում, որովհետև բոլորն էլ գիւղացիներ են և կամաւոր ու կը կամենան վերադառնալ դաշտային աշխատանքներու լուծելու:

Դ) Որ ռուսական բանակի որոշ զօրամասեր, խճուղու վրայով, գրաւում են կարևոր դիրքեր, որով կտրում են Արցախի հայկական զօրամասի նահանջի ճամբան ¦[1]:

Այս բոլոր հանգամանքները նկատի առնելով՝ խորհրդակցության մասնակիցները որոշում են իշխանությունը հանձնել հայ բոլշևիկներին և մայիսի 26-ին անցնեն Զանգեզուր:

Արցախից Դրոյի հեռանալուն իր հուշագրքում անդրադարձել է նաև Աբրամ Կիսիբեկյանը՝ ընդսմին շեշտելով այդ գործում արցախահայության դրսևորած վերաբերմունքն ու տրամադրվածությունը: Նրա հավաստմամբ՝ «Կարմիր բանակի ներկայացուցիչների Ղարաբաղում երևալը և այն, որ շուտով Կարմիր բանակը Ղարաբաղ պիտի մտնի, կայծակի արագությամբ տարածվելով՝ մեծ ոգևորություն առաջ բերավ Ղարաբաղի ողջ աշխատավորության մեջ:

Գեներալ Դրոն, տեսնելով ու զգալով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի տրամադրությունը, որոշեց իր բռնելիք դիրքը. նա շատ լավ հասկացավ

[1] Հայրենիք ամսագիր, 1923, հոկտեմբեր, էջ 125:

իրերի դրությունը, որոշեց իր բանակով ու գործիչներով հեռանալ Ղարաբաղից»[1]:

Ա. Կիսիբեկյանի գնահատմամբ՝ Կարմիր բանակի մուտք գործելուց հետո Դրոն կամ պիտի կամովին զինաթափվեր, կամ պիտի սկսեր եղբայրասպան քաղաքացիական կռիվ, որին«նա դեմ էր՝ հոգով ու համոզմունքով: Կարմիր բանակի ներկայացուցիչների Ղարաբաղում երևալը և այն, որ շուտով Կարմիր բանակը Ղարաբաղ պիտի մտնի, կայծակի արագությամբ տարածվելով՝ մեծ ոգևորություն առաջ բերավ Ղարաբաղի ողջ աշխատավորության մեջ:

Գեներալ Դրոն, տեսնելով ու զգալով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի տրամադրությունը, որոշեց իր բռնելիք դիրքը. նա շատ լավ հասկացավ իրերի դրությունը, եւ բավական երկար խորհելուց հետո Ղարաբաղի իշխանությունը հանձնեց բոլշևիկյան կազմակերպության ղեկավար բժիշկ Համբարձումյանին ու ինքն իր բանակով ու տեղի գործիչներով հեռացավ Ղարաբաղից[2]:

Հանրահայտ իրողություն է. արցախահայությունը որոշակի հավատ է ընծայել Ռուսաստանի նկատմամբ և այդ հավատը շարունակվում էր պահպանվել անկախ Ռուսաստանի կարգավիճակից՝ ցարական է, թե խորհրդային: Այդ օրերին Արցախում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը վկայում է, որ արցախահայությունն Արցախ մուտք գործած զորամասերին դիմավորում է սիրով ու խանդավառությամբ:

Ինչպե՞ս բացատրել Արցախ մուտք գործած Կարմիր բանակի զորամասերի նկատմամբ արցախահայության դրսևորած ջերմ ու խանդավառ վերաբերմունքը, ի՞նչ հանգամանքներով է պայմանավորված արցախահայության համանման վերաբերմունքը, այսինքն՝ ռուսասիրությունը:

Այս կապակցությամբ ուշագրավ բացատրություն է տալիս Ա. Կիսիբեկյանը: Նրա գնահատմամբ՝ արցախահայությունը «...առանց որևէ կասկածի համոզված էր, որ եկել է իր իսկական բարեկամը, իր արդար դատավորը, մարդկային ու ազգային իրավունքների ամենամեծ ու հավատարիմ պաշտպանը և որ միանգամայն ապահովված կլինի բազմաթիվ զոհաբերություններով ու զրկանքներով ձեռք բերած իր ազատությունը...»[3]:

Гамлет Геворкян, Вход советских войск в Арцах - 28 апреля 1920 года советские войска под руководством Тухачевского вошли в Баку и объявили Мусаватский Азербайджан Советским Азербайджаном. Затем, до 20 мая, под руководством армянских большевиков Красная Армия вторглась в ряд

[1] **Կիսիբեկյան Ա.,** նշվ. աշխ., էջ 508-509:
[2] Նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 368, ց. 1, գ. 5, թ. 182:

районов Арцаха и повсеместно установила советскую власть. В такой ситуации лидер вооруженных сил Арцах-Зангезур Дро вынужден был заставить советские войска покинуть земли Арцаха или позволить Арцаху стать советским.

В сложившейся ситуации он предусмотрительно выбрал второй вариант и избежал конфронтации с советскими войсками. Оставив власть армянским большевикам, он покинул Арцах со своей военной частью.

Hamlet Gevorgian, The entrance of Soviet troops to Artsakh - On April 28 of 1920, Soviet troops under the leadership of Tukhachevsky entered Baku and declared Musavat Azerbaijan as Soviet Azerbaijan. Then, until May 20, under the guidance of the Armenian Bolsheviks, the Red Army invaded a number of regions of Artsakh and established the Soviet rule everywhere. In such situation the leader of Artsakh-Zangezur armed forces Dro had to force the Soviet armies to leave the lands of Artsakh or to let Artsakh become Soviet.

In current situation, he prudently chose the second option and avoided confrontation with the Soviet troops leaving the authority to Armenian Bolsheviks and left Artsakh with his military unit.